ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

13 «»ապրիլի 2023թվականիN:119-Ա ք.Գյումրի

ԱՆՈՒՇ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ «ՄԱՐԱԼԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 3-ի N129-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 85-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողովի2023 թվականի ապրիլի 11-ի N3 որոշումը և Անուշ Հովսեփյանի 2023 թվականի ապրիլի 11-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄԵՄ՝

1. Անուշ Հովսեփյանին 2023 թվականի ապրիլի 13-ից նշանակել «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետով:

2. 2023 թվականի ապրիլի 13-ից դադարեցնել Անուշ Հովսեփյանի՝ «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի լիազորությունները:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է